



#### 64. ԻՍԱՍՏՈՒՆ ՏԻՐԱՅՈՒՆ

*Մի մարթ ու կնիկ են ըլըմ, իրեք ըրեխա են ունենում: Ամենաքասըբնու քասիբն են ըլըմ:*

*Կնիկն ասըմ ա.— Այ մարթ, էսա կարըմ չենք ապրինք, գնա տերտերի ձեռն ու ոտն ընգի, բալի մի էրկու խզմզորիկ անն, քի տա, մի փլասըմ փթաթե, տար կնանոնցն ասա՝ գրբաց եմ, բալի մի բան տան՝ ապրինք:*

*Ասըմ ա.— Ա՛ տնաքանդ, գիր չի գիդեմ, սև ու սպիտակը ջզըմ չեմ, գնամ ի՞նչ անեմ:*

*Ասըմ ա.— Բան չի կա, աստոծ ըղորմած ա, հլբաթ մի բան դուս կգս՛, դնա, փոշմանիլ չես:*

*Մի գշահապկա էլ կարըմ ա, կոխկիցը քաշ անըմ, զոռով էն նաչարին բոթբթոտելով ղրզըմ ա: Գնըմ ա տերտերին դանչանք անըմ ա, տերտերն էլ մի էրկու խզմզորիկ անըմ ա, մի փլասըմ փթաթորում, ասըմ ա.— Գնա, ա՛, տնաքանդ, ըրեխեքդ սոված կտորվում են, բալի մի կտոր հաց իրաց անես, ըրեխեքդ պհես:*

*էն գիրը վի կալած, դա վի ա կենըմ՝ գնըմ ա: Գնըմ ա, գնըմ, մի ծմակըմ, թալի կես տեղը, տենըմ ա՝ հրես մի ուխտ բարցած՝ նստած ա: Վախըմ ա թե մոդ գնա, ասըմ ա.— Ո՞վ գիդե, ի՞նչ ա վրենն բարցած, տերը դուս կգա խայտառակ կանե: Աղաք ա դնըմ, տենըմ ա՝ հրես էն ուխտին ոնց են ման գալի:*

Դրան հարցնում են, ասում են.— Դու ի՞նչ մարթ ես:

Ասում ա.— Ծս գրբաց եմ:

Ասում են.— Դե հլա գիրդ բաց արա, մեր ուխտը կորել ա, տես հլա ո՞րդի ա:

Դա փալասը բաց ա անում, դրին մտիկ անում, ասում ա.— Հրեն ձեր ուխտը էն թալըմը նստած:

Ասում են.— Ընդի շատ ենք մտիկ արել:

Ասում ա.— Գնացեք, թե ընդի շի, էկեք իմ աչու ձեռը կտրեցեք: Էնա գնում են ու գնում: էն ուխտի վրա էլ թաքավորի խազի-նեն ա ըլում բարցած:

Դրանք ասում են.— էս իմաստուն մարթին մենք բաց չենք թողուլ, սրան տանինք թաքավորի կուշտը:

Էնա մի քսան-եռեսուն մանեթ են տալի: Սա վազելով տա-նում ա կնգանն ա տալի:

Կնիկն ասում ա.— Ա՛յ մարթ, տեհա՞ր որ ասի աստոծ ըղոր-մած ա: Գնա՛, այ մարթ, դնա վախիլ մի:

Ծնա եղ վի ա կենում, գնում, ասում ա.— Հլա գնամ տենամ թա-քավորն ի՞նչ պտի տալ, որ ուխտը գդել եմ:

Հետնեբուն տանում են թաքավորի կուշտը:

Ասում են.— Թաքավորն ապրած կենա, էս մարթն իմաստուն ա, սհե-սհե, մեր ուխտը գդել ա:

Ասում ա.— Դե սրան բաց մեք թողուլ, գնացեք սրա ըրեխանցն ու կնգանն էլ բերեք:

Զիան են վի ունում, գնում են՝ բերում:

Մի օթախ են տալի, միչին դնում են, մի սուրու էլ ապրուստ են տալի, պհում:

Օրի մի օրը թաքավորի կնիկն իմանում ա, որ սհենց իմաստուն մարթ ա էկել:

Իրան քոծին ղրգում ա, ասում ա.— Իմ նշանի մատնուքը կո-րել ա, ինչ ուզենա՝ կտամ, թող գա փոնի:

Դա կնգանն ասում ա.— Բա հմի բան չգիտեմ, գնամ ի՞նչ անեմ, ա տնաքանդ:

Ասում ա.— Վախիլ մի՛, փնա՛ աստոծ ըղորմած ա:

Մատնիքն էլ, էն կրակի էկած, քոծն ա գողացած ըլում:

Ասում ա.— Տիրացու շան, գլխիդ ու արևիդ մատաղ ըլիմ, մատնուքը ես եմ վի կալել, հմի ըմանչում եմ՝ թե իրան տամ: Ծս գիրդեմ գալ տիս ինձ ըռեխ տիս տալ, ախպեր ինչ ուզենաս՝ կտամ, ինձ ըռեխ մի տալ: էն մատնիքը տանինք մի դազի կուլ գծիլ տանք, էնա դուն արի գրիդ մտիկ արա, ասա.— Ղազի փորումն ա:

Վի են կենըմ, գնըմ:

Ասըմ ա.— Տիրացու ջան, իմ նշանի մատնուքը կորել ա, գրի, ինչ ուզենաս, քի կտամ: Հմա որ գրնես ոչ, ես բողմի կգամ:

Էն քոծը մատնուքը տարած ա ըլըմ մի շուխս դագի կուլ գծիլ տված ա ըլըմ:

Էն կրակի էկածը, մթամ գրին մտիկ ա անըմ, ասըմ ա.— Դու գլուխդ լվանալիս ես էլել, հանել ես՝ գրել ըստողի վրա, կուռդ դիրել ա, վեր ա ընդել, ձեր շուխս դագն էկել ա կուլ գծել, հրե քըմն ա:

Ասըմ ա.— Ախշի-ախշի, գնա դագը րի: Գնըմ ա բերըմ, մորթըմ են, դրուստ որ մատնուքը հանըմ են:

Ասըմ ա.— Վա՛յ, ես քու գլխին ու արևին մատաղ, տիրացու ջան: Եղնա մի սուրու փող ա տալի, գնըմ ա:

Ուրախանաս՝ ինչ կնիկն ուրախանըմ ա:

Ասըմ ա.— Բա որ ասեի, դու հլե ցավոտըմ ես:

Դրանք մի բոլ հարստանըմ են:

Մի օր էլ էդ գեղըմը մի ժամ են շինըմ, մի քանի տավար են մորթըմ, պղնձնին լիքը խորակ են էփըմ, որ ժամն օծեն, եղնա քեփ անեն: Էդ տիրացվին էլ կանչըմ են, տանըմ վերի ծերին նըստացնըմ, որ դա էլ խալխի ըղաքին օխնիլ տի ժամը: Էդ կրակի էկածը մի բան էլա գիդե ոչ:

Ասըմ ա.— Հմի ես ի՞նչ անեմ:

Մըն էլ եդ ա մտիկ անըմ, էնքան խալխը տենըմ ա թե չէ, սիրտը պատռըմ ա: Ասըմ ա.— Ես փախչիլ տիմ, ջհանդամը, թե ինձ եղնա կսպանեն:

Վի ա կենըմ ու փախչըմ: Դրան որ փախչելիս տենըմ են հա, խալխը եղնեն շիմ դուս ա դառնըմ, որ սրան բռնե: Հլե շիմ դուս են գալի թե չէ, ժամը շոքըմ ա, փուլ ա գալի:

Էնա նոր գնըմ են սրա ոտն ու ձեռն ընգնըմ, ասըմ են.— Ոչ-խարի ըրեսին սհե իմաստուն մարթ, մին էլ սա յա:

Էնա էն գեղըմը դառնըմ ա իմաստուն, թաքավորի բարեբար մարթ: Բախտավորվիս, ինչ բախտավորվըմ ա:

